ՄԱՅՐ

(ՈՐԲԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

Ալէքսանդր Արծիւեանի

I

Մայը ունէի, մայը նազելի—
Մի փափկասիրտ արարած.
Բուռը սիրով նորան էի
Սիրաս ու հոգիս նուիրած։

Նա էր միակ իմ պաշտելին,
Միակ ծաղիկն իմ հոգոյս.
Նա էր իմ թռչլ, տնզոր կեանքին
Միակ նեցուկ, միակ յոյս...

Նա աղբիւր էր իմ խնդութեան,
Աղբիւր առատ, անսպառ.
Նորա կրծքին երջանկութեան
Վարդ էր փթթում ինձ համար։

Եւ ես ուրախ, եւ երջանիկ,
Որպէս անհոգ մի թռչնակ,
Նեռւում էի միշտ մօրքս գիրկ,
Վայելում սէր ու գգւանք։

Նորա գրկում, փափո՛ւկ գրկում
Հոգիս խաղաղ էր, հանգի՛ստ.
Չէի տանջւում, չէի զգում
Կեանքի հոգսեր, կեանքի վիշտ։

Եւ թուում էր ինձ՝ երջանկիս
Թէ այդպէս միշտ, յարատև
Ինձ կը ժպտայ մայր-նազելիս,
Որպէս կեանքիս վառ արև։

Սակայն, աւաղ... մահն անիրաւ,
Մահն անողոք ու դաժան
Ազիզ մորըս խլեց, տարաւ,
Տարաւ անդարձ, յաւիտեան...

Ո՛հ, էլ չունիմ ես մայր անգին,
Որ ինձ ուրէ՛ր, փայփայէ՛ր...
Որ իմ խղճուկ, անտէր կեանքին
Թև ու թիկունք նա լինէր...

15 յունիսի 1890 թ., Մոսկուա։

II

Զգացել էք դուք անգին կորուստի
Սիրտը կեղեքող խորին գառնութիւն.
Կամ ճաշակել էք դառն հրաժեշտի
Վերջին վայրկեանի վիշտ ու թախծութիւն։

Պատահե՞լ է ձեզ արդեօք գէթ մի ժամ
Տեսնել ձեր շուրջը լուռ ամայութիւն,
Զգալ ձեզ մենակ, անտէր, անխնամ,
Լացի մէջ միայն գտնել փրկութիւն...

Օ՛հ, որքա՛ն ծանր են, որքա՛ն գառնագին
Այդ ցնցումները հոգւոյ տառապման...
Եւ այդ ամեն զգաց իմ հոգին,
Երբ խղճուկ մորըս գրի գերեզման...

16 յունիսի 1890 թ., Մոսկուա։